Հաստատվում է
Երևանի շախմատի ֆեդերացիայի
Փոխնախագահի Ա. Քալանթարյան
18 հունվար 2019 թ.

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՐԵՎԱՆԻ 89-ՐԴ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ 1/4 ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՐՑԱՇԱՐԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպիչը Երևանի շախմատի ֆեդերացիա

Ժամկետները 24.01.-01.02.2019 թ.

Անցկացման վայրը Երևանի Արաբկիրի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց

Հասցե Կոմիտաս 37

Մասնակիցները

Մրցաշարին մասնակցելու իրավունք ունեն 2001-2075 վարկանիշ ունեցող շախմատիստները, ինչպես նաև 2001-ի ցածր վարկանիշ ունեցող, 2000թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո ծնված 1-ին կարգային և 1-ին կարգի մեկ բալ ունեցող շախմատիստները:

Անցկացման կարգը

Մրցաշարն անց է կացվում համաձայն ՖԻԴԵ-ի շախմատային օրենսգրքի, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Ժամակարգը՝ 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:
Խաղասկզբից 15 րոպե ուշանալու դեպքում մասնակցին գրանցվում է պարտություն:

Հաղթողների որոշումը Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը կորոշվեն ըստ՝

- Հատված Բուխհոլց-1 ցուցանիշի
- Բուխհոլցի ցուցանիշի
- սև գույնով խաղացած պարտիաների քանակի:
- 1-ից 25-րդ տեղեր գրված շախմատիստներն իրավունք են ստանում հանդես գալու Երևանի 89-րդ առաջնության 1/2 եզրափակիչ մրցաշարին: